Նախագիծ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասերին համապատասխան.

Երևանի ավագանին *որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով հաստատված N4 հավելվածում Երևանի քաղաքապետարանի (այդ թվում աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) 2009թ. հաստիքային ցուցակում (այսուհետ՝ Հաստիքային ցուցակ), կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հաստիքային ցուցակի «Ղեկավարություն» գլուխը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելված 1-ի։

2. Հաստիքային ցուցակի «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի։

3. Հաստիքային ցուցակի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների աշխատակազմեր» գլխի «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» կետի «Ֆինանսական բաժին» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 3-ի։

4. Հաստիքային ցուցակի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «ԱՄԲՈՂՋԸ» տողի «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «12840.0» թիվը փոխարինել «12860.0» թվով։

5. Հաստիքային ցուցակի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան» տողի «Միավորների քանակը» սյունակի «350» և «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «48208.00» թվերը փոխարինել համապատասխանաբար «355» և «49083.00» թվերով։

6. Հաստիքային ցուցակի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» գլխի «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողի «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «150315.00» թիվը փոխարինել «150335.00» թվով։

7. Հաստիքային ցուցակի վերջում «ԱՄԲՈՂՋԸ» տողի «Միավորների քանակը» սյունակի «1934» և «Ընդամենն ամսական աշխատավարձը» սյունակի «218810.09» թվերը փոխարինել համապատասխանաբար «1939» և «219705.09» թվերով։

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատվել է Երևանի քաղաքապետարանի (այդ թվում աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների) 2009թ. հաստիքային ցուցակը:

Երևան քաղաքի ավագանու 23.09.2009թ. N2/2-8-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել Որոշման 2-րդ կետի «դ» ենթակետով հաստատված N4 հավելվածում, ինչով պայմանավորված անհրաժեշտ է կատարել նաև համապատասխանաբար գումարային փոփոխություններ:

Երևանի քաղաքապետարանի խնդիրների, աշխատանքների ծավալների և գործառույթների հստակեցման հետ կապված Որոշմամբ հաստատված հաստիքացուցակում գնումների բաժին չի նախատեսվել: Ներկայումս Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գնումների կազմակերպման աշխատանքների գծով պատասխանատու է սահմանվել աշխատակազմի ֆինանսական վարչությունը, ուստի, հաշվի առնելով գնումների 2009թ. ծավալները, 2010թ. ու հետագա տարիներին դրանց ավելացումները, ինչպես նաև գնումների գործընթացը «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան իրականացնելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել աշխատակազմի ֆինանսական վարչությունում ստեղծել գնումների բաժին՝ 5 հաստիքով, որից 3-ը՝ հաստիքների ավելացման հաշվին, իսկ 2-ը՝ աշխատակազմի ֆինանսական վարչությունում առկա հաստիքների հաշվին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով՝ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Երևանի քաղաքապետին հիշյալ վարչական շրջանի աշխատակազմի ֆինանսական բաժնում մեկ գլխավոր մասնագետի հաստիքը փոխարինել բաժնի պետի տեղակալի հաստիքով: Հիշյալ փոփոխությունը պայմանավորված է աշխատակազմի ֆինանսական բաժնի ծանրաբեռնվածությամբ և նույն բաժնի գլխավոր մասնագետներից մեկի գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարելու հետ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով՝ առաջարկվում է Երևանի ավագանու 06.07. 2009թ. N3-Ա որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հավելված 1
Երևանի ավագանու
2009 թվականի ------ «---» -ի
N------- -Ա որոշման

«Հավելված 4
Երևանի ավագանու
2009 թվականի հուլիսի 6-ի
N3-Ա որոշման

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածի «Ղեկավարություն» գլխում կատարվող փոփոխությունը

	Ղեկավարություն				
1	քաղաքապետ	1	400.0		400.0
2	քաղաքապետի առաջին տեղակալ	1	330.0		330.0
3	քաղաքապետի տեղակալ	3	300.0		900.0
4	քաղաքապետի գլխավոր խորհրդական	1	240.0		240.0
5	քաղաքապետի խորհրդական	6	230.0		1380.0
6	քաղաքապետի օգնական	3	180.0		540.0
7	մամուլի քարտուղար	1	180.0		180.0
8	գործավար	2	150.0		300.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**18**			**4270.0**

Հավելված 2
Երևանի ավագանու
2009 թվականի ------ «---» -ի
N------- -Ա որոշման

«Հավելված 4
Երևանի ավագանու
2009 թվականի հուլիսի 6-ի
N3-Ա որոշման

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածի «Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնում «Ֆինանսական վարչություն» գլխում կատարվող փոփոխությունը

	Ֆինանսական վարչություն				
1	վարչության պետ-գլխավոր ֆինանսիստ	1	220.0		220.0
2	վարչության պետի տեղակալ	2	200.0		400.0
3	վարչության գլխավոր մասնագետ	1	140.0		140.0
-	**Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժին**				
4	բաժնի պետ-գլխավոր հաշվապահ	1	175.0		175.0
5	գլխավոր մասնագետ	2	120.0		240.0
6	առաջատար մասնագետ	3	115.0		345.0
-	**Ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության վարչություն**				
7	բաժնի պետ	1	175.0		175.0
8	գլխավոր մասնագետ	2	120.0		240.0
9	առաջատար մասնագետ	1	115.0		115.0
10	Գործավար	1	70.0		70.0
-	**Բյուջետային ծրագրավորման բաժին**				
11	բաժնի պետ	1	175.0		175.0
12	գլխավոր մասնագետ	2	120.0		240.0
13	առաջին կարգի մասնագետ	1	105.0		105.0

14	գործավար	1	70.0		70.0
-	**Կազմակերպությունների եկամուտների ու ծախսերի ծրագրավորման և մոնիտորինգի բաժին**				
15	բաժնի պետ	1	175.0		175.0
16	գլխավոր մասնագետ	3	120.0		360.0
17	գործավար	1	70.0		70.0
-	**Ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական գործառույթների կազմակերպման բաժին**				
18	բաժնի պետ	1	175.0		175.0
19	գլխավոր մասնագետ	1	120.0		120.0
20	առաջատար մասնագետ	1	115.0		115.0
-	**Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման բաժին**				
21	բաժնի պետ	1	175.0		175.0
22	գլխավոր մասնագետ	2	120.0		240.0
23	առաջատար մասնագետ	1	115.0		115.0
24	առաջին կարգի մասնագետ	1	105.0		105.0
-	**Գնումների բաժին**				
25	բաժնի պետ	1	175.0		175.0
26	գլխավոր մասնագետ	3	120.0		360.0
27	առաջատար մասնագետ	1	115.0		115.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**38**			**5010.0**

Հավելված 3
Երևանի ավագանու
2009 թվականի ------ «---» -ի
N------- -Ա որոշման

«Հավելված 4
Երևանի ավագանու
2009 թվականի հուլիսի 6-ի
N3-Ա որոշման

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» կետի «Ֆինանսական բաժին» ենթակետում կատարվող փոփոխությունը

	Ֆինանսական բաժին				
1	բաժնի պետ	1	175.0		175.0
2	բաժնի պետի տեղակալ	1	140.0		140.0
3	գլխավոր մասնագետ	2	120.0		240.0
4	առաջատար մասնագետ	1	115.0		115.0
5	առաջին կարգի մասնագետ	5	105.0		525.0
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10**			**1195.0**